


ԴԱՍ 12. ԳԼՈՒԽ 6 – ԿՆՔՎԱԾ ԳՐՔԻ ԲԱՑՎԵԼԸ


1) Ընդմիջում



2) 70-րդ շաբաթը



3) Միջոցառումների կարգը



Մեծ Նեղությունները

«Որովհետև այն ժամանակ այնպիսի մեծ նեղություն պիտի լինի, որի նմանը աշխարհի սկզբից մինչև հիմա չի եղել և չի էլ լինի: Եվ եթե այդ օրերը չկրճատվեին, ոչ մի մարմին չէր փրկվի. բայց **ընտրյալների պատճառով** այդ օրերը պիտի կրճատվեն» (Մաթ. 24:21,22):

Սահմանված՝ Հիսուսի կողմից, մեջբերում Դանիել 12-ից...

«Եվ այն ժամանակ Միքայել մեծ իշխանը, որ կանգնում է քո ժողովրդի գավակների վրա, պիտի բարձրանա, և այնպիսի նեղության ժամանակ է լինելու, որպիսին չի եղել **ազգ լինելուց** մինչև այդ ժամանակ, և այդ ժամանակ քո ժողովուրդը կազատվի՝ բոլոր նրանք, **ովքեր Գրքում գրված գտնվեն**» (Դան. 12:1):

«Հակոբի նեղությունների ժամանակը»

«Ավա՛ղ, քանզի մեծ է այն օրը. դրա նմանը չկա. դա Հակոբի նեղության ժամանակն է. բայց փրկվելու է դրանից» (Եր. 30:7):

Նեղությունների նպատակը

«Կգնամ, կվերադառնամ Իմ տեղը, մինչև ընդունեն իրենց հանցանքն ու Իմ երեսը որոնեն. իրենց նեղության մեջ կշտապեն ինձ դիմելու» (Հովսեա 5:15):

Չերթականությունը

- Նեղությունները չեն գալիս, մինչև Գառը բացում է կնիքը
- Գառը չի բացում կնիքը, նախքան 24 երեցների՝ իրենց պսակներն ապակե ծովի վրա դնելը
- 24 երեցները (և յոթ ճրագակալները) երկնքում են, երբ Նեղությունները սկսվում են

Նեղությունները սկսվում են

«Եվ լեռներին ու ապառաժներին ասում էին. «Ընկե՛ք մեզ վրա, ու ծածկեցե՛ք մեզ Նրա երեսից, որ գահի վրա է նստում, ու նաև Գառնուկի բարկությունից. որովհետև եկել է Նրա բարկության օրը. և ո՞վ կարող է կանգնել»» (Հայտ. 6:16,17)

«Այլ յոթերորդ հրեշտակի ձայնի օրերին, երբ նա փողը հնչեցնի, կկատարվի Աստծո խորհուրդը, ինչպես հայտարարել էր Իր ծառաներին՝ մարգարեներին» (Հայտ. 10:7)

«...ու եկավ Քո բարկությունը» (Հայտ. 11:18)

«... յոթ հրեշտակներ, որոնք վերջին յոթ պատուհասներն ունեին, քանի որ նրանց միջոցով էր ավարտվում Աստծո բարկությունը» (Հայտ. 15:1)

«Գնացե՛ք, Աստծո բարկության յոթ թասերը դատարկեցե՛ք երկրի վրա» (Հայտ. 16:1)

«... կատարվեց» (Հայտ. 16:17)

Մենք ավելի շատ կտեսնենք «Աստծո բարկության» մասին. 11:18, 14:10, 16:19, 19:15: **Մենք սահմանված չենք «Բարկության օրվա» համար. Ա Թեսաղ. 5:9, Եբր. 10:26-31:**

«Տիրոջ օրը»

20 անգամ ՀԿ-ի 8 մարգարեական գրքերում, 3 անգամ ՆԿ-ում (Գործք 2:20, Հովել 2:31, Ա Թեսաղ. 5:2, Բ Պետ. 3:10):

- «Աստծո օրը» (Բ Պետ. 3:12)
- «Բարկության օրը» (Սուփ. 1:18)
- «Տիրոջ բարկության օրը» (Սուփ. 1:18)
- «Խավարի օր» (Հովել 2:2, Սուփ. 1:15)

(Մարդկության պատմության նախկին ժամանակահատվածներում երբևէ չի եղել, որ «Այս աշխարհի թագավորությունները դարձան մեր Տիրոջն ու Նրա Օծյալինը» (Հայտ. 11:15):

Հայտնություն 6-րդ գլուխ

Հաջորդ 14 գլուխները մանրամասնում են Դանիելի «**70-րդ շաբաթը**»

1) «**Ես տեսա, թե ինչպես Գառնուկը բացեց կնիքներից մեկն ու չորս կենդանիներից մեկից որոտալի մի ձայն լսեցի, որ ասում էր. «Արի՛ և տե՛ս»:**

«**Արի**». Erchomai = Նախորդել, հետևել: Մի տեղից գալ մեկ այլ տեղ, օգտագործվում է մարդկանց ժամանելիս. հայտնվել, ի հայտ գալ, գնալ, հետևել մեկին:

(Երբ հարցը վերաբերվում է երկնքին, երեցներն են խոսում: Երբ հարցը վերաբերվում է երկրին, կենդանիներն են խոսում):

1-ին կնիքը. Սպիտակ ձի/Յաղթողը

2) «Ու տեսա, ահա, մի **ձերմակ ձի**, որի հեծյալը մի աղեղ ուներ, և նրան մի պսակ տրվեց. Նա հաղթելով եկավ ու հաղթելու գնաց»:



«**Ձիեր**» = դատաստաններ (Դ Թագ. 6:15-18, Եր. 46:9-10, Հովել 2:3-11, Նաում 3:1-7, Ջաք. 1:8-11, 6:1-7):

«Պսակ». stephanos. հաղթողի պսակ, ոչ թե թագավորական պսակ: Քրիստոսը թագավորական պսակ է կրելու, ինքնիշխանության, միապետական իշխանության խորհրդանիշը (Հայտ. 19:12):

(**Յեծյալը Քրիստոսը ՉԷ**. այս հեծյալը չար ուղեկիցներ ունի: Քրիստոսը բացում է կնիքները. Նա այդ ամենի մեջ չէ: Այս հեծյալը նման է լինելու Քրիստոսին: Հետաքրքիր է, թե որքան մեկնաբանողներ են սխալվել այս հարցում: Ավելին, նրան կանչում է չորս կենդանիներից մեկը. դժվար թե դա Քրիստոսը լիներ):

Եկող իշխանը – Օձի սերունդը

Յին Կտակարանի հղումներ (33-ից)

- Օձի սերունդ. Ծննդ. 3:15
- Փոքրիկ եղջյուր. Դան. 7:8-11, 21-26, 8:9-12, 23-25
- Եկող իշխան. Դան. 9:26
- Նենգ թագավոր. Դան. 11:36

Նոր Կտակարանի հղումներ (13-ից)

- Գազան. Հայտ. 11:7, 13գլ.
- Սուտ մարգարե. Հայտ. 13

- Հակաքրիստոս. (Կեղծ Քրիստոս, Նեո). Ա Հովհ. 2:22
- Անօրեն. Բ Թեսաղ. 2:8
- Մեղքի մարդ. Բ Թեսաղ. 2:3
- Կորստյան որդի. Բ Թեսաղ. 2:3
- Նա, ով իր անունով է գալիս. Հովհ. 5:43

Նրա բնութագիրը

- Մութ առեղծվածներ հասկացող/intellectual genius. Դան. 7:20, 8:23, Եզ. 28:3
- Համոզիչ հոետոր/դերասան. Դան. 7:20, Հայտ. 13:2
- Խորամանկ քաղաքական գործիչ. Դան. 11:21, 8:25
- Ֆինանսական հանճար. Հայտ. 13:17, Եզ. 28:4,5, Սաղմ. 52:7, Դան. 11:38,43
- Բռնակալ ռազմական գործիչ. Դան. 8:24, Հայտ. 6:2, 13:4, Ես. 4:16
- Հզոր կազմակերպիչ. Հայտ. 13:1,2, 17:17
- Կրոնական միավորող առաջնորդ. Բ Թեսաղ. 2:4, Հայտ. 13:3,14,15, Սաղմ. 10, 52, 55; Ես. 10,11,13,14; Եր. 49-51; Ջաք. 5; Հայտ. 1.

2-րդ կնիք. Կարմիր ձի/Պատերազմներ

3) «Ու երբ երրորդ կնիքը բացեց, լսեցի, որ երկրորդ կենդանին ասաց. «Արի՛ և տե՛ս»: 4) «Եվ մի ուրիշ՝ **կարմիր ձի** ելավ, և նրա հեծյալին իշխանություն էրտրված, որ երկրից վերացնի խաղաղությունը, որ միմյանց սպանեն, և նրան մի մեծ սուր տրվեց»:



Կարմիրը նույնացվում է վախի և մահվան հետ. կարմիր վիշապ (12:3) և կարմիր գազան (17:3): Մաթ. 24:6,7, Մարկ. 13:7,8, Ղուկ. 21:9,10, Դան. 11:36:

«**Թուր**». (Machaira). Եզ. 38:21, Եր. 25:15-33 (29), Միք. 7, Դան. 11:33

Եզ. 38:21 - Եւ իմ բոլոր սարերի վրա նորա դէմ սուր պիտի կանչեմ, ասում է Տէր Եհովան, ամէն մարդու սուրն իր ընկերոջ դէմ է լինելու:

3-րդ կնիքը. Սև ձի/Սով

5) «Ու երբ **երրորդ կնիքը** բացվեց, լսեցի երրորդ կենդանու ձայնը, որ ասում էր. «Արի՛ ու տես»: Ու տեսա, ահա, **մի սև ձի**, ու նրա հեծյալը ձեռքին մի կշեռք ուներ»: 6) Եւ չորս կենդանիների միջից մի ձայն լսեցի որ ասում էր. Մի կապիճ ցորենը մի դենարի, եւ երեք կապիճ գարին մի դենարի, եւ **ձէթին եւ գինուն** փասս չ'տաս:



Սև գույնը հաճախ կապ ունի սովի հետ (Ողբ. 4:4-8, 5:10, Եր. 14:1,2): «Հացը կշռով ուտել» հրեական արտահայտություն է, որ նշանակում է ուտելիքի սակավություն (Ղևտ. 26:25-33, Եզ. 4:10,11,16):

«**Յուղ և գինի**». Սա ավելին է, քան ընդամենը սով: Այն նկարագրում է սնունդի չափի համաշխարհային վերահսկում: Եկող համաշխարհային առաջնորդը վերահսկելու է սնտեսությունը (Հայտ. 13:17, Ամովս 8:11):

Famines & Troubles – Mark 13:8

- 70 million died of starvation in the 20th century
- 925 million are hungry every day
- 5 million die of hunger annually

4-րդ կնիքը. Դեղնավուն ձի/Մահ

7) «Ու երբ **չորրորդ կնիքը** բացվեց, չորրորդ կենդանուց մի ձայն լսեցի, որ ասում էր. «Արի՛ ու տե՛ս»»: 8) Եւ տեսա, եւ ահա մի **դեղնականաչ ձի**, եւ նորա վրա մի նստող՝ անունը Մահ, եւ Դժոխքը գնում էր նորա ետեւից. եւ իշխանութիւն տրուեցաւ նորանց՝ աշխարհքի չորրորդ բաժնի վրա սրով եւ սովով եւ մահով եւ երկրի գազաններով սպանել:

Մահ. Մատանան. Եբր. 2:14 (հմմտ. Հայտ. 1:18): Երկու կերպարներ: Մահը վերաբերվում է մարմնին, Հադեսը՝ (Hades) հոգուն: Հովհաննեսը տեսավ այս երկու թշնամիներին, որ գնում էին իրենց որսի հետևից, զինված թրով, սովով, մահով (մահտարածամ) և երկրի գազաններով:



Ղևտացիների 26:21-26, Եզ. 14:12-23:
 «Որքա՞ն ավելի կլինի, երբ Ես Իմ չորս սաստիկ պատիժները՝ սուրը, սովը, չար գազաններն ու համաճարակը, Երուսաղեմի վրա ուղարկեմ՝ մարդ թե անասուն այնտեղից բնաջնջելու համար» (Եզ. 14:21):

- 5,000 die daily of AIDS (USAID)
- 2.5 million in Africa have AIDS
- Over 335 diseases have been discovered since 1940

5-րդ կնիքը. Նահատակներ

9) «Ու երբ բացեց **հինգերորդ կնիքը**, **գրհասեղանի տակ** տեսա այն մարդկանց հոգիները, որ սպանված էին **Աստծո Խոսքի** ու այն վկայության համար, որ պահում էին»: 10) «Եվ բարձր ձայնով աղաղակեցին ու ասացին. «Ո՛վ սուրբ ու ճշմարիտ Տեր, մինչև ե՞րբ դատաստան չես տեսնելու ու մեր արյան վրեժը չես պահանջելու երկրի բնակիչներից»:

Հոգիները գիտակցում են («ննջած» չեն) Ա Թեսաղ. 4:14-16, Բ Կորն. 5:8, Փիլ. 1:23: Հունարեն *martus* բառից առաջանում է մարտիրոս բառը, որ նշանակում է «վկա»:

«Բանն Աստծո» արտահայտությունը նույնպես Քրիստոս բառի հոմանիշն է: «**Տեր, մինչև ե՞րբ**». սա եղել է դարեր շարունակ տառապող Աստծո ժողովրդի աղաղակը: (Սաղմ. 74:9-10, 79:5, 89:46, 94: 3-4, Ամբ. 1:2): «Քո թագավորությունը գա»-ն արձագանքում է նրանց աղերսին: Աբելի արյունը (Բ Մն. 24:22), Մովսեսի երգը (Բ Օր. 32:43, Դ Թագ. 9:7):

One source says that there is one Christian martyr every 5 minutes, with 130,000 yearly. It has also been noted by some that the 20th century saw 65% of all Christian martyrs since the inception of the Church. See: *The Price of Freedom Denied* by Brian J. Grim e Roger Finke (Cambridge: Cambridge University Press, 2011).

11) «Եվ նրանցից ամեն մեկին **ձերմակ հանդերձներ տրվեց** ու ասվեց նրանց, որ մի փոքր ժամանակ էլ հանգստանան, մինչև լրանա իրենց ծառայակիցների ու եղբայրների **թիվը**, որոնք սպանվելու են նրանց նման»:

Երբ նրանց ձերմակ հանդերձներ տրվեց?

Հայտ. 3 4-5 — 4 Սակայն Սարդիկեյում անգամ մի քանի անուններ կան, որ չեն կեղտոտել իրենց հագուստները և ճերմակ հագուստով շրջելու են Ինձ հետ, քանի որ արժանի են: 5 Նա, ով հաղթի, ճերմակ է հագնելու...

Մյուսները միանալու էին նրանց (11:7, 12:11, 14:13, 20:4-5): Նրանք ոչ թե անձնական վրեժխնդրություն են փնտրում, այլ Աստծո սրբության և արդարադատության հաստատումը: Այսօր, թվում է, թշնամին հաղթում է, սակայն վերջին խոսքն Աստծուն է պատկանում:

6-րդ կնիքը. Տիեզերական փոփոխություններ

12) «Եվ տեսա, երբ բացվեց վեցերորդ կնիքը, և ահա՛, մի մեծ երկրաշարժ եղավ, ու արևը սևացավ, ինչպես սև մագեղեն քուրձ, և լուսինն արյան պես եղավ»: 13) Եւ երկնքի աստղերը թափուեցան երկրի վերայ ինչպես թզենին իր խակ պտուղը թափում է՝ սաստիկ քամուց շարժուած: 14) Եւ երկինքը տեղիցը քաշվում էր գալարուող գրքի պես. եւ բոլոր սարերն ու կղզիներն իրանց տեղիցը շարժուեցան:

Երկրաշարժեր

- Երեքից 1-ինը (Հայտ. 6:12, 11:13, 16:18-19)
- Բառացի երկրաշարժեր (Ել. 19:18, 20:18-19, Գ Թագ. 19:11, Մաթ. 27:51-52)
- Երկրաշարժեր և արևի խավարում (Հովել 2:2,10, 30-31; Մաթ. 24:39; Մարկ. 13:24, 25; Դուկ. 21:25)
- ցնցում = seismos (Ես. 24:1,3,4,19,23; 34:2-4; Սաղմ. 148:3-6; Եբր. 12:26- 29; Անգե 2:6; Հովել 2:1,10-12, 30-31; 3:15; Սոփ. 1:15; Ես. 13:9-10; 34:2-4; Եզ. 32:7,8)

Earthquakes – Luke 21:11; Matt. 24:3,7

1803-1900 – 12 in 97 yrs.

1901-1938 – 53 in 37 yrs.

1939-1976 – 71 in 37 yrs.

1977-2008 – 123 in 31 yrs.

2009 – 2014 – predict 190 total

-5x more since 1970-More above 6.7 on the Richter scale in the last 10 years than in the previous 80 years

Համատիեզերական աղետներ

- Արևը «դարձավ մագեղեն քուրձի պես» (Ես. 13:10, Հովել 2:10)

- Լուսինը «դարձավ արյան պես» (Ես. 13:10, 24:23, Հովել 2:51, Մաթ. 24:29)
- Աստղերը «թափվեցին երկրի վրա, ինչպես սաստիկ քամուց թզենին թափում է իր խակ թզերը» (Մաթ. 24:29)
- Երկինքը «ոլորված մագաղաթի պես ետ քաշվեց» (Ես. 34:1-8)
- «Ու բոլոր լեռները և կղզիները շարժվեցին իրենց տեղերից» (Եր. 4:23-24, Հայտ. 16:20):


15) Եւ երկրի թագավորները եւ մեծամեծները եւ հարուստները եւ հազարապետները եւ զօրաւորները եւ ամեն ծառա եւ ամեն ազատ թագցրին իրանց անձերը այրերի եւ ժայռերի մէջ, 16) Եւ ասում էին սարերին եւ ժայռերին. Վայր ընկէք մեզ վրա, եւ ծածկեցէք մեզ աթոռի վրա նստողի երեսից, եւ Գառի բարկութիւնից. 17) Որ նորա բարկութեան մեծ օրը եկել է, եւ ո՞վ կարող է կանգնել:

Թագավորները ժայռերի մէջ. Ես. 2:10-19; Յեսու 10:16,

Յեսու, հմմտ. Յայտնություն

- (Yehoshua-ն Հեսու անվան տարբերակն է, Եհովան է փրկությունը)
- Զորավար, ով նվաճեց խոստացյալ երկիրը
- 7 տարվա ռազմական արշավ.
 - Ընդդեմ 7 (սկզբնական 10) ազգերի
- Թորան Երիքովի մոտ անտեսվեց. (Շաբաթն անտեսվեց, դևտացիները ներգրավվեցին)
 - Սկզբում ուղարկվեցին «Երկու վկաներ» — Հայտ. 11
 - Յոթ փողերի դեպքը — Հայտ. 8
 - (նախորդում է՝ «Երկնքում կես ժամի չափ լռություն եղավ»)
- Թշնամիները հավաքվեցին Երուսաղեմի առաջնորդի հրամանատարության ներքո
 - Ադոնիսեդեկ՝ «Արդարության տեր»
- Վերջնական արդյունքում պարտվեց.
 - Երկնքից թափված քարերով
 - Արևի, լուսնի վրա եղած նշաններով
- Թագավորները թաքնվում են քարանձավում («Ժայռեր, մեզ վրա ընկեք...»)

7 կնիքով կնքված գիրքը




Մի խումբ նշաններ

	Մատթեոս	Ղուկաս	Չայտնություն
Սուտ Քրիստոսներ	24:4-5	21:4	6:1-2
Պատերազմներ	24:6	21:9,10	6:3-4
Սովեր	24:7ա	21:11	6:5-6
Մահեր	24:7բ-8	21:12	6:7-8
Նահատակություններ	24:9	21:24	6:9-11
Չամաշխարհային քաոս	24:10-13	21:25	6:12-17

Տարբեր շեշտադրումներ – Different Emphasis?

- «Այն ժամանակ նրանք պիտի...» Մաթ. 24:8,9
- «Բայց այս բոլորից առաջ...» Ղուկ. 21:12
- «Բայց այս բոլորը՝ ցավերի սկիզբն է»

Յոթնապատիկ կառուցվացքը



«Յոթերի» յուրաքանչյուր խոշոր շարքում՝ կնիքները, փողերը և թասերը, մենք տեսնում ենք, որ յուրաքանչյուր շարքի 6-րդ և 7-րդ դեպքերի միջև միշտ կա բացատրական հատված: 7 կնիքներից 6-րդն ավարտվելուց հետո կա ընդմիջում որոշ բացատրության համար, նախքան մենք կշարունակենք 7-րդ կնիքը 8-րդ գլխում:

Իսրայելը ՀԿ-ի կենտրոնական թեման է, իսկ հիմա էլ այն հայտնվում է որպես Աստծո գործի գագաթնակետ Հայտնության գրքում: (Այն նաև Նոր Կտակարանի կիզակետում է, սակայն այս պահին շատ թյուրիմացություններ կան):

Չաջորդ դասը

- Կարդացեք Հայտնություն 7-ը և 14-ը
- Ո՞ր ցեղերն են պակասում, և ինչու՞: Ի մի բերել Դանի ցեղի խորհրդավոր մարգարեությունները

Ո՞րն է 144.000-ի դերը